



## ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻ ԳՈՒՄ

### ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՑԻՑ

Դվինի պեղումները.—Պատմական Հայաստանի աշխատակալոր մայրաքաղաքի պեղումները երկար տարի-մյակների պատմություն ունեն: Այդ աշխատանքը անխոնջ մերպով և ծեռնիասորեն վարում է հնագետ-պատմաբան լայրոֆ: Կարո Ղաֆադարյանը: «Պեղման աշխատանքների այս տարվա ծրագիրը գործադրության մեջ դրվեց հունիսի մակարեներից և բավականին արդյունավետ եղավ:

Քաղաքի միջնաբերում հայտնաբերվեցին հեթանոսական ժամանակներից մնացած 2 ատրուչաններ, մեկ հատ օքրեան սկզբունք՝ կենտրոնում թագավորական պատկերով, ուստի եկրերին պարունական գրերով:

Արշավախումը պարզէ է, որ Դվինն ունեցել է ապացույք գործադրության հրեա, կրօնական և ապակու ունեմություն: Դվինն ունեցել է նաև հայճապակու արտադրություն: Հայտնաբերված են շուրջ 400 կոտր ապակի և համապակայ իրեր:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում վերջերս հայտնաբերված հեթանոսական արձանների բեկորներ, մեյնացարային գործածության իրեր, կրօնաքան և այլն: Մնացումները շարունակվելու են մինչև ոչ աշուն:

Ուսումնասիրություն Կիլիկիան մանրանկարչության մայիսին: Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությունը լուս է ընծայել Լևաբայանի աշխատությունը՝ «Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմություն XIII—XIV դարերում»: Հետաքրքրական և արժեքավոր այս գիրը նվիրված է Հայաստանի և հայ ժողովրդի պատմության ամենաբարձ ուսումնասիրված մի շրջանին՝ մոնղոլական տիրապետության շրջանին:

Զեղինակը հանգամանորեն տվել է մոնղոլական արշավանքների պատկերը, նվաճողների վարած հարկացին և տնտեսական քաղաքականությունը և դրա հետևանքով երկրի տնտեսության ու արտադրական ուժերի անկան տխուր պատկերը:

Ավելի քան 600 էջից բաղկացած այս աշխատությունը գալիս է զգայիրեն լրացնելու այդ շրջանի մեր պատմության բացը և լուս սփռողու մեր ժողովրդի ամենամռալլ շրջանի վրա:

Արժեքավոր աշխատություն հայ և վրաց ժողովուրդների մշակութային կապերի մասին: Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը լուս է ընծայել հայտնի պատմաբան և բանասեր, հանգուցյալ դոկտոր-պրոֆեսոր Լևոն Մելիքսեթ-Բենի «Հայ գրողները և Վրաստանը» աշխատության առաջին հատորը:

Արժեքավոր այս աշխատությունը շատ նոր տեղեկություններ է տալիս հայ և վրաց ժողովուրդների գրական ու մշակութային կապերի մասին: Գրքի մեջ ցուց է տրված, որ հայ և վրաց գրողները, պատմագիրներն ու

մշակույթի գործիչները սերտորեն շփվել և հարաբերության մեջ են եղել սկսած Շ դարից: Այդ կապերն առավել զարգացել են ԺԹ դարում: Խոսելով ԺԹ դարի մեր գործիչների ու հասարակական գործիչների գործունեության մասին, հեղինակը հետաքրքրական նորություններ է ասում հայ և վրաց ժողովորդների մշակութային կապերի և համագործակցության վերաբերյալ: Գրում ցույց են տրված յուրաքանչյուր հայ հեղինակի մասին եղած վրացերեն գրականությունը և նրանից կատարված թարգմանությունները:

Պրոֆ.-դոկտ. Լ. Մելիքսեթ-Բեկը հետաքրքրական փաստեր ու նորություններ է հաղորդել նաև հայ և վրաց լեզվուների փոխադրության մասին:

**Հրաչյա Աճառյանի անվամբ.**— Հայաստանի Մինիստրությունը սովորել որոշակար, գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտը կոչվել է հայ ականավոր գիտնական, լեզվաբան Հրաչյա Աճառյանի անվամբ:

Հանգուցյալ գիտնականին այս պատիվը տրված է նկատի ունենալով նրա բացառիկ ծառայությունները հայագիտության և հայ լեզվաբանության զարգացման գործում, ինչպես նաև նրա բարձրամայա բեղմանը մանկավարժական գործունեությունը:

Հովհաննես Թումանյանի գրական ժառանգությունը.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը լուս է ընծայել մի ստվարածախալ գիրը, նվիրված Հովհաննես Թումանյանի գրական ժառանգության ուսումնակիրությանը: Հատորը կոչվում է «Թումանյան: Ուսումնակիրություններ, հրապարակումներ»: Նախատեսված է այս խորագրով հրատարակել միքանի հասորներ, որոնք ամբողջովին պիտի պարփակեն մեծանուն գրողի գրական ժառանգությունը»:

Առաջին հատորում կետեղված են մի շարք չիրատարակված գեղարվեստական Երևերի տարբերակներ ու սևագրություններ, նամակներ, ելույթներ, ինչպես նաև մեր մի շարք գրականագիտների ուսումնակիրությունները Հովհաննես Թումանյանի մասին: Մեծ արժեք և հետաքրքրություն են ներկայացնում անմահ հեղինակի նամակները և եղությունները:

Հատորը կազմել, ծանոթագրել ու խմբագրել են գրականագիտներ Ա. Ինչիկյանը և Է. Զքաջյանը:

**Ամերիկահայ գրող Զավեն Մուրմեյանը Հայաստանում.**— Օգոստոսի սկզբներին, Սովետական Միության մեջ տուրիստական պտույք կատարելու նպատակով, Երևան ժամանեց ամերիկահայ հայտնի գրող Զավեն Մուրմեյանը: Նա Երևանում մնաց 10 օր, արժանանալով Հայաստանի գործների միության և սիրութքահայության հետ մշակութային կապի ընկերության շերմ ընդունելության: Զավեն Մուրմեյանը հրուր եղավ իր հարապատ բրոց՝ Եվգինե Սարգսյանի մոտ, որին չեր տեսել 44 տարի:

Անվանի գործը ծանոթացավ Հայաստանի մշակութային կյանքին, դիտեց Երևանը, ուր եղել է 1920 թվականին մի քանի ամսով, այցելեց Սևան, Դիլիջան, Գեղարք, Գառնի, Զվարթնոց: Ամենուրեք նա բացառիկ շերմությամբ արտահայտվում էր Հայաստանից և նրա ժողովրից ստացած իր սրտառուց, լավ տպավորությունների մասին:

Զավեն Մուրմեյանը շերմ սիրով ու ակնածանքով այցելություն տվեց Նորին Ս. Օծություն Տ. Վագիգեն Ա Վեհափառ Հայրապետին և սիրալիր վրուց ունեցավ Նոր հետ: Անվանի գրողը Երկուուր հավատով իր ուսուր կատարեց Մայր Տաճարում, եղավ թանգարանում, նոր Վեհարանում և լավագույն տպավորություններով հրաժշտ առաջ Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից:

Երևանի նոր հատակագիծը.— «Երևաննախագիծ» ինստիտուտը շուտով կավարտի մայրաքաղաքի նոր հատակագիծը: Ըստ նախագծի, մոտ ապագայում քաղաքը կունենա 900 000 բնակչի: Նոր գրաված տարածությունը կընդարձակվի մեկ և կես անգամ գիտակորպեալ դեպի արևմուտք և իրաւական բնակչության 3 000 000-ից կիսանի մինչև 9 000 000 բնակուած մետրի:

Նախատեսվում է քաղաքը բաժանել 9 վարչական շրջանների, յուրաքանչյուրը 70—150 000 բնակչությամբ: Նոր կառուցվելիք արդյունաբերական ծեռնարկություններին կից կստեղծվեն բնակելի թաղամասեր, որոնք իրար թետ կմիացվեն նոր, լայնամուռ մայրուղիներով: Հատուկ ուշադրություն է նվիրվելու քաղաքի կանաչապատմանը, զգելու են նոր կրօսայիններ, պուրակներ, արմեստական անտառներ: Բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնելու է ոչ պակաս քան 20 քառակուած մետր կանաչ տարածություն:

Հրապանի աջ ափին, դեպի Եջմիածին տանող ճանապարհի շրջակայրում, ստեղծվելու է նոր կենտրոն իր հրապարակով և ճարտարապետական նոր կառուցվերով:

Պետական խորհրդականներից կամքված հատուկ հանձնաժողովը քննության առաջ Երևանի նոր հատակագիծը և մի շարք էական դիտողություններից հետո բարձր գնահատական անդամություններում կատարված աշխատանքներին:

**Պետական համալսարանի նոր շենքը.**— Արդեն մի քանի տարի է, ինչ կառուցվում է Երևանի պետական համալսարանի նոր շենքը Այգեստան կոչված թաղամասում: Արդյուն փողոցի վրա գտնվող Երեխարկանի բավական մեծ շենքը վաղուց է, ինչ չէր բավարարում համալսարանի պահանջներին: ·

Նոր համալսարանը բաղկացած կիմի 8 խոշոր շենքներից, որտեղ կարող են ստորել 12 000 ուսանողներ: Հարակից օժանդակ շենքերով միասին, համալսարանը կներկայացնի ուսանողական մի մեծ թաղամաս պարտեզներով, ցայտադրյուններով, ջրավազաններով, մարզական հրապարակներով և դարչիններով:

Նախատեսված շենքերից մի քանիսն արդեն կառուցված են և գործում են, ինչպես օրինակ բնագիտական ֆակուտատիվի գեղեցիկ շենքը:

Ներկայիս միջնական ուշադրությունը կենտրոնացված է գյուղակոր, կենտրոնական հատվածի վրա, որը պետք է ավարտի այս տարի: Ութիրականի այս շենքը կունենա շուրջ 13 000 քառակուած մետր օգտագործելի տարածություն: Այստեղ են լինելու համալսարանի գրադարանը և ընթերցարանը, ուր միաժամանակ կարող են պարագալ 600 հոգի: Դասախոսությունների մեծ դաჩիճը կունենա 1000 տեղ: Մեկ ամբողջ հարկ հատկացվելու է զանազան լաբորատորիաների:

**Հայաստանի բնակչությունը**—Կենտրոնական վիճակա-  
գրական վարչության տվյալների համաձայն, առ 1-ը հու-  
նիսի 1964 թվականի, Հայաստանի Հանրապետության  
բնակչության ընդհանուր թիվը կազմել է ավելի քան  
2 100 000 մարդ:

**Բնակարանային շինարարություն.**—1964 թվականի  
առաջին կիսամյակում, հունվարի 1-ից մինչևն հունիսի  
(1-ը), ամերոշ Հայաստանում օգտագործման է նաևն վաճա-  
ռահանձնված 230 000 քառակուսի մետր նոր բնակելի տարածություն:  
Դա կազմում է շուրջ 5000 բնակարան, օժոված անհրա-  
ժեմիշտ նարմարություններով: Կիսամյակի ծրագիրը կա-  
տառարկած է 106 տոկոսով: Այդ բոլոր բնակարանները  
ամեկառացված են պետական միջոցներով:

Բացի այդ, հանրապետության քաղաքներում և գյու-  
ղթերում նույն ժամանակամիջոցում կառուցված են մեծ  
աշխատավորակ անձնական տներ բանվորների, ծագույ-  
ների և կոլտնտեսականների կողմից՝ ի հաշիվ իրենց  
խնայողությունների և պետությունների: Ստացված վակերի:  
**Հետաքրքրական թվեր.**—Անցյալ 1963—1964 ուսում-  
անական տարում Հայաստանի բոլոր հանրակրթական  
դպրոցներում սովորողների ընդհանուր թիվը կազմել է  
450 500 հոգի, կամ մոտ 40 000 ավելի, քան նախորդ  
դպտումական տարում: Միջնակարգ դպրոցներն ավար-  
տակ են 7 000 հոգի, գրեթե 2 500-ով ավելի, քան նա-  
խորդ ուսումնական տարում:

Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստա-  
տություններում (տեխնիկումներ, ուսումնարաններ) սո-  
վորողների թիվը նույն ուսումնական տարում կազմել է  
3 100 հոգի կամ 3 000-ով ավելի, քան նախորդ տարին:  
Այս տարի այդ հաստատություններն ավարտել են 3 900  
մոնղոլ:

Հանրապետության բարձրագույն ուսումնական հաս-  
տատություններում ուսանողների ընդհանուր թիվը կազ-  
մում էր 29 100 հոգի, կամ 3 200-ով ավելի, քան նա-

խորդ տարին՝ 3 000 ուսանողներ այս տարի ավարտեցին  
բարձրագույն ուսումնական հաստատությունները:

**Եփա մի նոր ջրմուղ Երևանի համար.**—Վերջերս ա-  
վարտվեց Երևանի մեկ նոր ջրմուղի կառուցումը: Ջրմուղը  
սկիզբ է առնում Հրազդանի ծորում, Արևի բուժավայրից  
ոչ մեռու գտնվող աղբյուրներից (ոչ հանքային) և ունի  
շուրջ 15 կիլոմետր երկարություն: Նոր ջրմուղը մեկ  
վարկացված տախում է շուրջ 500 լիտր ջուր: Այդ քանակը  
առաջիկայում կհասցվի 620 լիտրի:

Ջրմուղը կառուցվել է Երևանի պոլիվինիացետատ  
ընթական գործարանի միջոցներով և հիմնականում բա-  
վարաբեր է այդ հովայական գործարանի կարիքները:  
Անկանած ջրմուղից կօգտվի նաև քաղաքը, զգայիրքն  
ավելացնելով սպասվող ջրի քանակը:

Այս ջրմուղը թվով նինգերորդն է, որոնցով սնվում է  
մայրաքաղաքը:

**Սփյուռքահայ ուսանողներ Երևանի ուսումնական հաս-  
տատություններում.**—Ակադ 1957 թվականից, Երևանի  
բարձրագույն ուսումնական հաստատություններում ըն-  
դունվում են սփյուռքահայ երիտասարդներ: 1957 թվա-  
կանին Երևանում սովորում էին ընդամենը 15 հոգի,  
մինչեա 1963—1964 ուսումնական տարում սուարեկրոյա  
ուսանողների թիվը կազմել է 140 հոգի, շուրջ 15 տար-  
բեր երկրներից:

Առաջիկա ուսումնական տարում Երևանում սովորելու  
համար կմամանեն ևս 70 պատանիներ ու աղջիկներ:

Սփյուռքահայ ուսանողները ընդունվում են գյուավո-  
րապես պետական համայստանում, պոլիտեխնիկ և  
բժշկական ինստիտուտներում: Այս տարի նրանցից 6 հոգի  
ավարտեցին բժշկական ինստիտուտը և համալսարանի  
բանասիրական ֆակուլտետը:

Բացի սփյուռքահայ ուսանողներից, Երևանի բարձրա-  
գույն ուսումնական հաստատություններում սովորում են  
նաև որոշ թվով օտարերկրացի ուսանողներ Միջին և  
Մերձագոր Արևելքի երկրներից:

